Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Հանրապետության օրվա առթիվ

28.05.2026

Սիրելի՛ հայրենակիցներ,
Շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության օրվա կապակցությամբ:
Մայիսի 28-ը մեր պետականության, ազգային արժանապատվության և միասնականության խորհրդանիշն է: Այս օրը մեզ հիշեցնում է խաղաղ, անվտանգ և ուժեղ պետություն կառուցելու մեր ընդհանուր պատասխանատվության մասին:
Այսօր մեր առաջնային նպատակներից է ամրապնդել հաստատված խաղաղությունը, ապահովել երկրի անվտանգ զարգացումն ու կայուն ապագան: Այդ ճանապարհին Հայաստանի Հանրապետության բանակը շարունակում է կարևոր դեր ունենալ՝ պաշտպանելով մեր պետության անվտանգությունն ու խաղաղ կյանքը:
Հանրապետության հրապարակում կայանալիք զորահանդեսը խորհրդանշում է մեր պետության կազմակերպվածությունը, կայունությունն ու խաղաղ ապագայի հանդեպ վստահությունը:
Թող այս օրը յուրաքանչյուրիս համար դառնա նոր հավատ ու պատասխանատվություն ներշնչող խորհրդանիշ՝ հանուն խաղաղ, անվտանգ և զարգացող Հայաստանի:
Խաղաղություն՝ մեր ժողովրդին, ուժ՝ մեր պետությանը: